Արձանագրություն N 2
Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԱՆ ԳՀԽԾՁԲ-2024/56» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Արսեն Բաբայան
Հանձնաժողովի անդամներ	Վահան Վահանյան, Հայկ Խուրշուդյան,
Հանձնաժողովի քարտուղար	Արմինե Գալուստյան

1. Գնման ընթացակարգի հայտերի բացման մասին

(Ա. Բաբայան)

Ընդունել ի գիտություն, որ 13.11.2024թ. հրապարակվել է հրավեր էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգում: Հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել 2024 թվականի նոյեմբերի 20-ը, ժամը 10:00-ն:

2024 թվականի նոյեմբերի 20-ին ժամը 14:00-ին գնահատող հանձնաժողովը հրավիրել է նիստ՝ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը բացելու նպատակով:

Հ/Հ	*Մասնակցի անվանում*	*Կազմակերպության հասցե, հեռախոս, էլ. հասցե*	*Կազմակերպության ՀՎՀՀ*
1	*«Խոյանք» ՍՊԸ*	*Ք. Հրազդան, Մաքրավան թ, Ն. Շնորհալու 19. 093 15 12 30 heg.53@mail.ru*	*03018972*
2	*«Կարոշիննախագիծ» ՍՊԸ*	*Ք. Երևան, Վ. Վաղարշյան 24/1, 43 բն, 010 27 86 38, karoshinnaxagic@yahoo.com*	*00102911*

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Ա. Բաբայան)

Հրավերի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության, հայտերի կազմման և ներկայացման, փաստաթղթերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին,

---

(Ա. Բաբայան)

Մասնակիցների կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը և համապատասխանում են հրավերի պահանջներին:

«Կարոշիննախագիծ» ՍՊԸ կողմից ներկայացված թաստաթղթերը համապատասխանում են հրավերի պահանջներին:

«Խոյանք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում արձանագրվել են անհամապատասխանություններ, որի մասին 16.01.2025թ մասնակիցը ծանուցվել է հետևյալ բովանդակությամբ.

➢ *«ՀՀ ԱՆ ԳՀԽԾՁԲ-2024/56» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով Ձեր կողմից ներկայացված մասնակցության հայտը, արձանագրել է անհամապատասխանություններ (Հավելված 1.2-ով կնքվելիք պայմանագրի կատարման համար առաջարկվող աշխատակազմի մասին տեղեկանքով Շինարարական աշխատանքների կազմակերպման մասնագետի կողմից ներկայացված համաձայնության մեջ նշվել է նախագծվող օբյեկտի կապի, հեռահաղորդակցության, և ազդանշանային համակարգերի նախագծման աշխատանքներին մասկացություն, այնինչ նշված աշխատանքները պետք է իրականացնեն լիցենզիայի համապատասխան ներդիրներով ընդգրկված մասնագետները), որոնք ենթակա են շտկման: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները խնդրում ենք մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել Ձեր կողմից առաջարկվող համաձայնությունը: Շտկված տարբերակը սահմանված ժամկետում պետք է ներկայացնել գնահատող հանձնաժողովի քարտուղարի հրավերում նշված՝ armine.galustyan@moh.am, էլեկտրոնային հասցեին մինչև 17.01.2025թ. ժամը 23:59-ն: Հարցերի դեպքում կարող եք զանգահարել 060 80-80-03 հեռախոսահամարին՝ ներքին (1702):*

16.01.2025թ.

Հանձնաժողովը որոշեց՝

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (Կարգ) 41-րդ կետով՝ կասեցնել նիստը մեկ աշխատանքային օրով և ծանուցել մասնակիցներին՝ շտկելու արձանագրված անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Ընդունել ի գիտություն՝

Մասնակիցը սահմանված ժամկետում շտկել է արձանագրված անհամապատասխանությունը:

4. Մասնակիցների առաջարկած գների մասին

(Ա. Բաբայան)

Ստորև ներկայացվում են մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները

Հ/հ	գնման առարկայի անվանումը	նախահաշվային գին	մասնակիցների անվանումը	մասնակիցների գնային առաջարկները		
				առանց ԱԱՀ	ԱԱՀ	ընդհանուր
1	«Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի ծննդատան մասնաշենքի վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական ծառայություններ	13 099 800	«Խոյանք» ՍՊԸ	11 500 000	-	11 500 000
			«Կարոշիննախագիծ» ՍՊԸ	11 830 000	-	11 830 000

6. Ընտրված մասնակիցներ որոշելու մասին

(Ա. Բաբայան)

30.01.2025թ.

Հանձնաժողովը որոշեց՝

6.1 Մասնակիցների ոչ գնային չափանիշները գնահատել հետևյալ կարգով.

Գնահատման չափանիշը	*Նվազագույն և առավելագույն միավորը*	*Մասնակիցների անվանումը*	
		«Խոյանք» ՍՊԸ	*«Կարոշիննախագիծ» ՍՊԸ*
Լիցենզիա	*Բավարար /անբավարար*	*Բավարար*	*Բավարար*
Մասնագիտական փորձառություն	*Բավարար /անբավարար*	*Բավարար*	*Բավարար*
Աշխատանքային ռեուրսներ			
Արտոնագրված ճարտարապետ /գլխավոր ճարտարապետ/	*30-60*	*36*	*54*
Արտոնագրված ճարտարագետ-շինարար /կոնստրուկտոր/	*25-40*	*29*	*40*
Նախահաշիվ կազմող մասնագետ	*Բավարար /անբավարար*	*Բավարար*	*Բավարար*
Շինարարական աշխատանքների կազմակերպման մասնագետ	*Բավարար /անբավարար*	*Բավարար*	*Բավարար*
Ընդամենը՝ (ՏԱ)	***55-100***	***65***	***94***

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատման չափանիշ	*Մասնակիցների անվանումը*	
	«Խոյանք» ՍՊԸ	*«Կարոշիննախագիծ» ՍՊԸ*
Գնային չափանիշ	*100*	*97,2*
Մասնակցին տրվող գնահատականի հաշվարկ	*100 X 0.3 + 65 X 0.7*	*97,2 X 0.3 + 94 X 0.7*
Մասնակցին տրվող գնահատական	***75,7***	***94,96***

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

6.2 Ղեկավարվելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով, 96-րդ, 97-րդ կետերով՝ «Կարոշիննախագիծ» ՍՊԸ-ն ճանաչել ընտրված մասնակից.

7. Ընթացակարգի ամփոփման մասին

(Ա. Բաբայան)

Հիմք ընդունելով Օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետը՝ «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2024/83» ծածկագրով գնման ընթացակարգի համար անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու մասին հայտարարության տեքստը հրապարակելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Անգործության ժամկետի ավարտին հաջորդող չորրորդ աշխատանքային օրը պայմանագիր կնքելու ծանուցում ուղարկել «Կարոշիննախագիծ» ՍՊԸ-ին 11 830 000 ՀՀ դրամ պայմանագրային գնով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ *Ա. Բաբայան*

անդամներ՝ _____ *Վ. Վահանյան*

_____ *Հ. Խուրշուդյան*

քարտուղար՝ _____ *Ա. Գալուստյան*